ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/161

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.10.2018թ. թիվ 01.1/26-3/19452-18 գրությամբ «ՎԻՆԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 18.10.2018թ. թիվ ԱԳ/ԿԲ-4/16054-18 գրության հիման վրա, 27.10.2018թ. թիվ 01.1/26-3/19452-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ՎԻՆԿ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«ՎԻՆԿ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ՎԻՆԿ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/161 ընթացակարգի շրջանակներում 30.10.2018թ. ժամը 11:30-ին և 01.11.2018թ. ժամը 11:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 01.11.2018թ. ժամը 11:50-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընկերության կողմից ընթացակարգի հրավերի պահանջների ոչ ամբողջական ուսումնասիրության պատճառով, չի ներկայացվել հրավերով պահանջվող ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված մոդուլային ծրագիրը, որի հետևանքով Ընկերության հայտը մերժվել է:

3. **<u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված փաստերը.</u>**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.10.2018թ. թիվ ԱԳ/ԿԲ-4/16054-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպված «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/51» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտ է ներկայացրել «ՎԻՆԿ» ՍՊԸ-ն:

Գնման ընթացակարգի հրավերով որպես պարտադիր պահանջ սահմանված էր ՀՀ ԿԳ նախարարի կողմից երաշխավորված՝ մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագրի՝ ըստ հրավերում ներառված մասնագիտությունների և ՀՀ ԿԳ նախարարի համապատասխան հրամանի առկայությունը, սակայն «ՎԻՆԿ» ՍՊԸ-ի կողմից վերոնշյալ պարտադիր պահանջը չի կատարվել: Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է և մասնակցին առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը չի շտկվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/161 ընթացակարգի շրջանակներում 30.10.2018թ. ժամը 11:30-ին և 01.11.2018թ. ժամը 11:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/161 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/161 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որի հրավերով սահմանվել է, որ հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար պահանջվում է մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագիր:

2. Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «ՎԻՆԿ» ՍՊԸ-ն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.10.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ՎԻՆԿ» ՍՊԸ-ի հայտին կցված չէ որպես լիցենզիայի պահանջ նախատեսված կնքված և հաստատված մոդուլային ծրագիրը և մոդուլային ծրագիրը հաստատող ՀՀ ԿԳ նախարարի համապատասխան հրամանը:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է մեկ աշխատանքային օրյա ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը վերացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.10.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ «ՎԻՆԿ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, այն հիմքով, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել շտկված փաստաթղթերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.10.2018թ. թիվ 01.1/26-3/19452-18 գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 18.10.2018թ. թիվ ԱԳ/ԿԲ-4/16054-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ ***մասնակիցը*** կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ***հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:***

Կարգի 41-42-րդ կետերի համաձայն՝

41. Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը,

կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով նախատեսվել է, որ հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար պահանջվում է մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագիր. այն է՝ ՀՀ կառավարության 2014 թ-ի ապրիլի 17-ի «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» N 534-Ն որոշման հավելված 11-ի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ՀՀ կառավարության 2015 թ-ի սեպտեմբերի 10-ի «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանելու մասին» N 1062-Ն որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետի համաձայն երաշխավորված՝ մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագիր:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4-րդ կետի 4.3 ենթակետի 5-րդ պարբերության համաձայն՝ ***մասնակիցը հայտով ներկայացնում է*** սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (մոդուլային ծրագրի) պատճենը:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «ՎԻՆԿ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.10.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ՎԻՆԿ» ՍՊԸ-ի հայտին կցված չէ որպես լիցենզիայի

պահանջ նախատեսված կնքված և հաստատված մոդուլային ծրագիրը և մոդուլային ծրագիրը հաստատող ՀՀ ԿԳ նախարարի համապատասխան հրամանը:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է մեկ աշխատանքային օրյա ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը վերացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 04.10.2018թ. էլեկտրոնային եղանակով տեղեկացրել է Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.10.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ «ՎԻՆԿ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, այն հիմքով, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել շտկված փաստաթղթերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը սահմանում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ ***մասնակիցը*** կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ***հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՎԻՆԿ» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված կարգով, հայտով չի ներկայացվել հրավերով պահանջվող մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագիրը, որն Ընկերության կողմից չի

ներկայացվել նաև Կարգի 41-րդ կետի համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ծանուցվելուց հետո:

Գտնում եմ, որ «ՎԻՆԿ» ՍՊԸ-ն «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորություն, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.10.2018թ. թիվ 01.1/26-3/19452-18 գրությամբ «ՎԻՆԿ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00002169) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՎԻՆԿ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ